Անցումային արդարադատության կառուցակարգերն ու ընթացակարգերը

Բայանդուրյան Արարատ Հ.
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0004-2740-1418
ararat.bayanduryan@gmail.com

ՀՏԴ՝ 342; **EDN:** EYJCUQ;
DOI: 10.58587/18292437-2025.6-42
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Անցումային արդարադատություն, կառուցակարգեր և ընթացակարգեր, քրեական արդարադատություն, լյուստրացիա, ճշմարտության և վեթթինգ, արադարության հանձնաժողովներ, արմատական համակարգային բարեփոխումներ, զանգվածային իրավախախտումներ

Структуры и процедуры переходного правосудия

Баяндурян Араратъ А.
аспирант Института философии, социологии и права Национальной академии наук РА,
Член палаты адвокатов РА (Ереван, РА)

Аннотация. В статье автор подробно рассматривает структуры, процедуры и механизмы реализации переходного правосудия. Основными структурами и процедурами являются осуществление уголовного правосудия, раскрытие истины и справедливости, реализация восстановительных и компенсационных процедур, проведение радикальных и системных реформ и др.
Главная миссия реализации структур и механизмов переходного правосудия заключается в выявлении массовых нарушений прав, привлечении виновных к ответственности и создании системы гарантий, предотвращающей повторение подобных действий в будущем.
Ключевые слова и словосочетания: Переходное правосудие, структуры и процедуры, уголовное правосудие, люстрация, комиссии по установлению истины, проверке (веттингу) и справедливости, радикальные системные реформы, массовые нарушения прав

Transitional Justice Mechanisms and Procedures

Bayanduryan Ararat H.
PhD student of the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Member of the Chamber of Advocates of the RA (Yerevan, RA)

Abstract. The article provides a detailed examination of the structures, procedures, and mechanisms for implementing transitional justice. The main structures and procedures include the administration of criminal justice, the disclosure of truth and justice, the implementation of restorative and compensatory processes, and the execution of radical and systemic reforms, among others.
The primary mission of implementing the structures and mechanisms of transitional justice is to uncover mass human rights violations, hold perpetrators accountable, and establish a system of guarantees to prevent similar actions in the future.
Keywords & phrases: Transitional Justice, Mechanisms and Procedures, Criminal Justice, Lustration, Truth and Vetting, Justice Commissions, Radical Systemic Reforms, Mass Violations

Այն բանից հետո, երբ անցումային ենթատեքստը փոխադրվեց Արգենտինայի ու Չիլիի հետավտորիտար հասարակություններից դեպի Բոսնիայի և Հերցոգովինայի, Լիբիայի և Կոնգոյի ժողովրդական Հանրապետության հետկոնֆլիկտային հասարակություններ, նոր գործնական խնդիրները ստիպեցին ընդլայնել անցումային արդարադատության սահմանները և ներմուծել որոշակի նորարարություններ այս ոլորտում: Էթնիկական զտումները և տեղաշարժերը, նախկին ծառայողների վերինտեգրումը, համայնքների միջև հաշտեցումը, ինչպես նաև արդարադատության դերը խաղաղության կառուցման խնդրում պետք է լուծեր անցումային արդարադատությունը: Նախկին ծառայողների վերինտեգրումը, ընդհանրապես, կարևոր հարց է մի քանի պատճառներով: Առաջին հերթին, նախկին ծառայողների շարքերում կարող են լինել մարդիկ, ովքեր մեղավոր են մարդու իրավունքների զանգվածային խախտումներում կամ անգամ

հնարավոր է, որ լինեն այդ խախտումների ներշնչողներից: Երկրորդ, նախկին ծառայողները հաճախ ստանում են գումար և մասնագիտական պատրաստություն որպես ապառազմականացման խրախուսանք, այն դեպքում, երբ զոհերը ստանում են շատ փոքր փոխհատուցում կամ ընդհանրապես ոչինչ, որը նրանց թույլ կտար վերադառնալ նորմալ կյանք: Այսպիսի անհավասարակշռությունը բարոյապես համարվում է ոչ բանական և վիճահարույց: Այն կարող է առաջացնել հասարակության բացասական վերաբերմունքը նախկին ծառայողների վերինտեգրման հանդեպ, ինչպես նաև կարող է սպառնալ հետկոնֆլիկտային կայունությանը:

Քանի որ անցումային ենթատեքստերը աշխարհագրորեն տեղափոխվել են Լատինական Ամերիկայից ու Արևելյան Եվրոպայից դեպի Աֆրիկա և Ասիա, հետխորհրդային նախկին հանրապետություններ, անցումային արդարադատությունը կարող է բախվել տեղական, այսպես կոչված, ավանդական արդարադատության [**1**] միջոցների հետ, որոնք կարող են ծառայել որպես կարևոր լրացում անցումային շրջանի արդարադատության համար: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Սիերա-Լեոնեն և այլն, հասարակությունը կարող է ցանկանալ օգտագործել ավանդական ծեսեր թշնամական կողմերի փոխզիջման կամ նախկին կոմբատանտների վերինտեգրման աջակցության համար: Այսպիսի դեպքերում, անցումային արդարադատության դերը կայանում է ամբողջական մոտեցման կիրառման ապահովման մեջ, որը կարող է ներառել ծեսեր, բայց չի բացառում անձանց քրեական հետապնդման հնարավորությունը, ովքեր մեղավոր են ծանր հանցագործություններում և արդարադատության այլ միջոցների կիրառություն, օրինակ, ռեպարացիաներ, լրացուցիչ փոխհատուցման տրամադրման համար:

Ամբողջ աշխարհում՝ Ավստրալիայից, ԱՄՆ-ից մինչև Գվատեմալա և Հարավային Ամերիկա շարժումները սոցիալական արդարության համար ադապտացրել են անցումային արդարադատության միջոցներ անարդարության անցյալ համակարգային դրսևորումների փոխհատուցման ստացման համար: Այս շարժումները հաճախ ուղղորդում են իրենց ջանքերը դեպի խախտումներ, որոնք կապված են երկարաժամկետ խախտումների հետ, որոնք առաջանում են՝ կապված սոցիալ-տնտեսական, ռասայական կամ սեռային անհավասարության հետ, այլ ոչ թե դեպի ֆիզիկական բռնություն, ինչպես օրինակ սպանությունները և բռնությունները, որոնք գտնվում էին անցումային արդարադատության ավելի վաղ միջոցների ուշադրության կենտրոնում:

Վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում անցումային արդարադատությունը ընդլայնվել է և դիվերսիֆիկացվել, ինչպես նաև ձեռք է բերել հուսալի հիմքեր միջազգային իրավունքում:Անցումային արդարադատության իրավական հիմքերից մեկը սկսվում է Velasquez Rodriguez v. Honduras գործով մարդու իրավունքների Միջամերիկյան դատարանի որոշումով, որում Միջամերիկյան դատարանը որոշեց, որ բոլոր պետություններն ունեն չորս հիմնարար կամ նվազագույն պարտականություններ մարդու իրավունքների ոլորտում՝

- Ընդունել բանական միջոցներ մարդու իրավունքների խախտման կանխարգելման համար,
- Անցկացնել կատարված խախտումների լուրջ և արդար քննություններ,
- Իրականացնել համապատասխան պատժամիջոցներ այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր են խախտումների համար,
- Տրամադրել փոխհատուցում խախտումների զոհերին:

Այս որոշման բնույթը հաստատված է դատարանի հետագա որոշումներով և հաստատվում է ու աջակցություն ստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության մարմինների որոշումներով, ինչպիսիք են Մարդու իրավունքների հանձնաժողովը: Բացի դրանից այդ պարտականությունները անմիջականորեն ներառվել են ՄԱԿ-ի շատ կարևոր փաստաթղթերում, ինչպես օրինակ 1997, 2004 և 2005 թվականների անպատժելիության դեմ պայքարի ՄԱԿ-ի հատուկ զեկուցողների զեկույցները և կոնֆլիկտային ու հետկոնֆլիկտային հասարակություններում իրավունքի գերակայության և անցումային շրջանի արդարադատության հարցերով 2004 թ. գլխավոր քարտուղարի զեկույցը [**2**]:

1988 թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծումը նույնպես ունի մեծ նշանակություն, քանի որ այս դատարանի կանոնադրությունը ամրագրում է պետության կենսակարևոր պարտականությունները անօրինականության և զոհերի իրավունքները հարգելու ոլորտում:

Չնայած անցումային շրջանը կապված է բարոյական, իրավական և քաղաքական գործոնների հետ, մարդու իրավունքների զանգվածային կամ համակարգային խախտումների դեմ պայքարի խնդիրը կարող է լինել առավել քաղաքականորեն նշանակալից և գործնականում դժվար իրականանալի խնդիրներից մեկը: Ցանկացած իշխանության քաղաքական հավասարակշռությունը հաճախ հանդիսանում է որպես ծայրաստիճան նուրբ հարց և իրավահաջորդ կառավարությունները կարող են չցանկանալ անցկացնել լայնամասշտաբ նախաձեռնություններ, որոնք կապված են անցումային արդարադատության հետ կամ չեն կարող կատարել

դա՝ սեփական կայունությունը վտանգի տակ չդնելով:

Զանգվածային խախտումների ալիքի վրա քրեական արդարադատությունը հաճախ մեծ ուշադրություն է դարձնում, ինչպես զանգվածային խախտումներ իրականացրած անձանց պատասխանատվության ենթարկելու, այնպես էլ դատաքննության իրականացման վրա: Այդպես է եղել Արգենտինայում, ուր հասարակության ուշադրությունը գամվել էր 1980-ական թթ սկզբին ռազմական խունտայի ղեկավարության դատավարության վրա: Բայց քրեական արդարադատությունը կարող է բախվել այնպիսի խնդրի հետ, ինչպես ինքնավար մոտեցումը արդարադատության վերականգնման հանդեպ: Օրինակ՝ զանգվածային խախտումների, ցեղասպանությունների ժամանակ, զոհերի և հանցագործների թիվը կարող է հաշվարկվել տասնյակ կամ անգամ հարյուր հազարավորներով: Այսպիսի պայմաններում անհնար է ապահովել յուրաքանչյուր գործի արդարացի քննությունը դատական համակարգի շրջանակներում, քանի որ ծանրաբեռնումը շատ մեծ կլինի: Բացի դրանից դատական իշխանությունը կարող է լինել անգործունակ, եթե ոստիկանությունը, դատախազությունը և դատավորները կոռումպացված են, կամ նրանք շատ քիչ են, որպեսզի կարողանան գործել հասարակության շահերով ու ապահովել զոհերի արդարադատության իրավունքը:

Բացի այն հարցից, հնարավոր է արդյոք փոխհատուցել մարդու իրավունքների համակարգային կամ զանգվածային խախտումները դատական գործառույթների միջոցով, առաջանում է հարց, թե արդյոք այդ միջոցառումները համարժեք են: Անցումային, արդարադատությունը հիմնվում է այն համոզման վրա, որ դրանք համարժեք չեն: Շատ խնդիրներ, որոնք բխում են անցյալ խախտումներից, շատ բարդ են, որպեսզի հնարավոր լինի լուծել միայն դատական միջոցների օգնությամբ, այնպիսիք, ինչպիսիք են՝ դատաքննությունները: Համաշխարհային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունավետ լինելու համար, անցումային արդարադատությունը պետք է ամբողջական լինի: Այսինքն այն պետք է կազմված լինի մի քանի նախաձեռնություններից, որոնք լրացնում և ուժեղացնում են միմյանց: Այսպիսի նախաձեռնությունների տարրերը ներառում են՝ քրեական հետապնդումը անձանց դատական հետապնդում է, ովքեր պատասխանատու են մարդու իրավունքների զանգվածային խախտումների համար: Դատական հետապնդումը հաճախ խաղում է կարևոր դեր անձանց հետապնդումներում, ովքեր համարվում են առավել պատասխանատու զանգվածային կամ համակարգային հանցագործությունների համար: Ճշմարտության բացահայտման հանձնաժողովները քննության հատուկ հանձնաժողովներ են, ովքեր ստեղծվում և լիազորվում են պետության կողմից քննությունների անցկացման ու ոչ հեռավոր անցյալի չարաշահումների մասին տեղեկությունների հավաքագրման համար: Այդպիսի հանձաժողովները տալիս են նման չարաշահումների հետևանքների վերացման և նրանց կրկնության կանխարգելման հետևանքների վերացման առաջարկներ:

Ռեպարացիայի ծրագրեր պետության կողմից փոխհատուցվող նախաձեռնություններ, որոնք ուղղված են զոհերի որոշ տեսակների հանդեպ անցյալ չարաշահումների նյութական ու բարոյական հետևանքների փոխհատուցմանը: Որպես կանոն, այսպիսի նախաձեռնությունների շրջանակներում զոհերին տրամադրվում է նյութական ու սիմվոլիկ փոխհատուցման որոշակի համադրություն:

Անվտանգության համակարգի բարեփոխում՝ ռազմական, ոստիկանական, դատական և նրանց հետ կապված պետական հաստատությունների ճնշման և կոռուպցիայի գործիքներից հասարակության շահերին ծառայող ինստիտուտներ ձևափոխելու լայնամասշտաբ գործողություններ:

Գործնականում և հիմնադրույթորեն անցումային արդարադատության տարբեր միջոցները կապված են իրար հետ: Սա դառնում է պարզորոշ, եթե դիտարկենք այս միջոցներից յուրաքանչյուրի իրականացման հնարավոր հետևանքները ուրիշներից անջատ կերպով:

Առանց հրապարակայնության, ինստիտուցիոնալ բարեփոխումների կամ փոխհատուցման միջոցների, մեղավորների սահմանափակ քանակի պատիժը կարող է երևալ որպես քավության նոխազների որոնում կամ քաղաքական ռեվանշի ձև: Հրապարակայնությունը, իրավախախտների պատժի միջոցառումներից, ինստիտուտների բարեփոխումներից և զոհերին փոխհատուցման տրամադրումից անջատ կարող է երևալ որպես օդի դատարկ ցնցում: Հիշողության պահպանման միջոցառումները շատ փոքր և ոչ ճշմարիտ կերևան, իրար չլրացնող: Անցումային արդարադատության այլ միջոցներից անկախ, փոխհատուցումը կարող է ընկալվել որպես անօրինական կամ արյունոտ փողերի տրամադրում՝ զոհերի լռությունը գնելու փորձ: Նույն կերպով ինստիտուտների բարեփոխումը առանց զոհերի՝ արդարադատության, ճշմարտության բացահայտման և վնասի փոխհատուցման օրինական սպասումները բավարարելու որևէ փորձերի, կլինի անարդյունավետ հաշվետվողականության տեսանկյունից և չի պսակվի հաջողությամբ:

Այս միջոցների իրականացումը համապատասխան համադրությամբ և անհրաժեշտ հաջորդականությամբ կարող է լինել բարդ խնդիր:

Կան մի քանի ընդհանուր կանոններ, որոնք արժանի են հիշատակման: Առաջին հերթին՝ անցումային արդարադատության միջոցառումները պետք է կառուցվեն այնպես, որպեսզի առավելագույնս լրացնեն իրար և նվազեցնեն կոնֆլիկտներն ու հակասությունները: Երկրորդ, միջոցների միջև փոխկապակցվածությունը չպետք է լինի անորոշ կամ շատ բարդ, հակառակ դեպքում դա կարող է բերել յուրաքանչյուր միջոցի նպատակների խառնաշփոթի և դրանով իսկ զրկել այս միջոցները հասարակության մասնակցությունից և աջակցությունից: Երրորդ, անցումային արդարադատության տարբեր միջոցները պետք է կարգավորվեն այնպես, որպեսզի օգնեն անցումային շրջանի կարևոր տարրերի պահպանմանը և բազմապատկմանը՝ ժողովրդավարությանը և խաղաղությանը, առանց որոնց անցումային արդարադատությանը կարող է հասցվել լուրջ վնաս նրա մասշտաբների և որակի տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ անցումային շրջանի արդարադատության իրականացման համար գոյություն ունեն հետևյալ հիմնական կառուցակարգերը և ընթացակարգերը.

1. քրեական արդարադատության իրականացում,
2. ճշմարտության և արդարության բացահայտում,
3. վերականգնողական և փոխհատուցումների ընթացակարգերի իրականացում,
4. նոր ձևավորվող հասարակությունում արմատական և համակարգային բարեփոխումների իրականացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Автономов А. С.** Традиционное правосудие: история и современнсть // Государство и право, 2018, №9, 52 16-27
2. ООН Совет Безопасности. Доклад Генерального секретаря: Государства, право и правосудие периода в периода в конфликтных и постконфликтных обществах. 23 августа 2004. Документ/2004/616

Сдана / Հանձնվել է՝ 01.12.2025
Рецензирована / Գրախոսվել է՝ 08.12.2025
Принята / Ընդունվել է՝ 15.12.2025